

ՀԵՌԱԳԻՐ ՀԱՅԿ ԴԱՏԻ ՄԱՍԻՆ



Ինչպէս դրած էինք, Թրքահայ Դատի յանձնախումբը հեռագիր մը ուղղած է Միացեալ Ազգերու Կաղճակերպութեան նախագահին: Ահա առաջին թարգմանութիւնը.—

« Թրքական Հայաստանը ազատելու խոստումը, որ ձեռակերպուեցաւ Միացեալ Ազգերու վարիչներուն կողմէ 1914—18ի սլտերազմին առնն, չյարգուեցաւ Լոզանի ժողովին մէջ: Այս իրողութիւնը ամէնէն աղետալի հետեւանքը ունեցաւ Ազատութեան, Իրաւունքի, Քաղաքակրթութեան եւ Թաղաղութեան դատին համար: Յանուն զանազան օտար երկիրներու մէջ ցրուած միլիոնաւոր Հայերու, կը խնդրենք Լոնտոնի ներկայ խորհրդատու վին մէջ տալ արդար լուծում մը մեր Ազգ. Դատին, վճռելով Թրքական Հայաստանի շրջաններուն կցումը Խ. Հայաստանի նեղ տարածութեան, համաձայն նախագահ Ուիլսոնի դժած սահմաններուն, որպէսզի դարձանուի բոլոր ժամանակներու ամենամեծ անարդարութիւնը: »